

լեռը կը կոչուի «Զիթենեաց լեռը», ինչպէս թագաւորութեանց Բ. գրքի շատ մը օրինակներուն եւ Նոր Կտակարանին մէջ: Նեեմի (Ը. 5) կը տեղեկացնէ թէ լեռան կողմերը միայն ձիթենիներով չէին զարդարուած, այլ նաև շոճիի, մրտենիի և արմաւենիի ծառերով: Հին Կտակարանի այս լեռը մեծ դեր մը չէ կատարած: Հրէից Զիթենեաց լեռը ամբողջապէս մը թաղնած է քրիստոնեաներու Զիթենեաց լեռան քով: Այն յիշատակները որ կապուած են անոր գազաթին՝ նուազ փառաւոր չեն քան անոնք որ կը պանծացնեն անոր ստորտը՝ Գեթսեմանին: Զիթենեաց լեռան աւանդութիւններն ասոնք են.

1. «Արք Գալիլիացիք» բլուրը. — Այս բլուրը մասնաւոր պատմութիւն չունի:

ԺԳ. դարուն, ուխտաւորներու պատմուածքներուն մէջ կ'երևի Գալիլիայի լեռ անունով, նկատուելով իբր այն լեռը՝ որուն վրայ կը խօսի Ս. Մատթէոս (ԺԸ. 16) երբ կ'ըսէ. «Իսկ մետասան աշակերտքն զնացին ի Գալիլիա ի լեառնն՝ ուր ժամագիր եղև նոցա Յիսուս»: Բնագրին և եկեղեցւոյ հայրերուն մեկնութեան համաձայն, Տէրը երևցած է անոնց Գալիլիոյ դաւառին մէջ, ոչ թէ Զիթենեաց լեռ: ԺԴ. դարուն կոչած են զայն «Արք Գալիլիացիք», անուն մը որ մինչեւ հիմակ պահուած է: Ահաւասիկ պատճառը. Վիլլիպալտ Համբարձման սրբավայրին վրայ խօսած ժամանակ կ'ըսէ. «Եկեղեցիին ներսը կը գտնուին երկու սիւներ՝ մին հիւսիսային պատին և միւսը հարաւային պատին գիմաց: Անոնք հոն դրուած էին ի յիշատակ և իբր խորհրդանշան այն երկու մարդոց որ քսին. «Արք Գալիլիացիք», ինչո՞ւ համար երկինք կը